

## Սևերով, սևերով կպատեն

Սևերով, սևերով կպատեն,  
Իմ սիրտը, իմ սերը շորորուն,  
Ջահերը, ջահերը կմարեն  
Իմ կյանքի, իմ հոգու օրորուն:  
Կփակվեմ, կփակվեմ իմ խցում  
ՈՒ մենակ մեն-մենակ կմնամ,  
Խոհերի, մտքերի օվկիանում  
Մինչև լույս, մինչև մույթ կլողամ:  
Դու գնա', դու անցիր քո ճամփեն,  
Ցողաշաղ, հուսաշաղ, վեհորեն,  
Թող ապրե, թող շնչե քո հոգին  
Նոր հույզով, անհայտով անմեկին:  
Բայց մի օր գոջումի կսկիծով  
Թե դառնաս քո անցած ճամփեքով,  
Եկ ինձ մոտ , ես կելնեմ քո դիմաց  
Իմ հոգու խորանի լույսերով:  
Իսկ այժմ սևերով կպատեն  
Մոռացված, արնաքամ իմ հոգին,  
Լույսերով, հույսերով կսպասեն  
Քո դարձին. իմ կյանքի ծնունդին:

**Վահան Տերյան**